ԿԱՄՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«ՓսիԼայֆ» հոգեբանական աջակցման կենտրոն

ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՀՐՉԱՓՈՒԼՈՒՄ

Հոդվածում ներկայացված և քննարկված են սեռադերային նույնականացման գործընթացները և սեռադերային նույնականացման ձևավորման սոցիալական կողմի կարևորությունը: Այստեղ քննարկված են նաև դեռահասության սեռահասունացման գործընթացների կարևորությունը և սեռադերային դեստրուկցիայի դրսևորման առանձնահատկությունները:

Հանգուցային բառեր – սեռադերային, նույնականացում, դեստրուկցիա, օբյեկտ, դեռահասություն, սեռահասունացում, սոցիալիզացիա:

Սեռադերային նույնականացման հարցի վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ: Սեռային դերերը, մշակույթում ընդունված սեռադերային տարբերակումները երեխան ընկալում է մեծահասակների հետ շփման և հաղորդակցման ընթացքում: Կենսաբանական նախադրյալներով պայմանավորված շրջապատողները սկսում են փոխհարաբերություններ հաստատել ըստ համապատասխան սեռի և նպաստում են հոգեբանորեն սեռային տարանջատման գործընթացին և սեռային սոցիալիզացիայի գործընթացին:

Ջ. Մանին, ընդունելով սեռական տարբերությունների հարցում կենսաբանական ծրագրավորումը, սեռական նույնության ձևավորման գործում մեծ տեղ է տալիս դաստիարակությանը: Նա գտնում է, որ սեռական պատկանելիությունը ձևավորվում է դաստիարակության ազդեցությամբ, այլ ոչ թե կենսաբանական մեխանիզմով և բացատրում է, որ ծնվելուց հետո, կախված սեռական օրգանների տեղադրությունից տարբերվում են դաստիարակության ձևերը: Եթե տղային դաստիարակեն և վերաբերվեն որպես աղջիկ նա կդառնա աղջիկ և հակառակը [12]:

Դ.Ն. Իսաեվը, Վ.Ե. Կագանը նույնպես գտնում են, որ հիմնվելով կենսաբանական տվյալների վրա՝ ձևավորվում է երեխայի նկատմամբ որոշակի վերաբերմունք:

Ծնողների և շրջապատի վերաբերմունքը որպես այս կամ այն սեռի երեխայի, ձևավորում է երեխայի մոտ սեփական մարմնի մասին պատկերացում և առաջնային նույնականացում: Հետագայում գիտակցված թե անգիտակցված՝ երեխան ընդօրինակելով իր սեռի ծնողին, հեքիաթի հերոսներին, ինչպես նաև խաղային գործունեության մեջ սկսում է ընկալել մի շարք կանացի և տղամարդու բնութագրիչներ: Աստիճանաբար սկսում են յուրացնել գիտելիք իրենց կենսաբանական կողմը հասկանալու համար: Եթե անատոմիական կողմը հասկանալը տևում է կարճ, ապա հոգեբանական յուրահատկության յուրացումը, այսինքն կանացիության և տղամարդկության մասին պատկերացումները, ավելի երկար ժամանակահատված է ընդգրկում [3]:

Այսինքն սեռի հասկացության հոգեբանական յուրահատկության ձևավո-

ռումը սոցիալական բնութագրիչ է, որը տեղի է ունենում դաստիարակության, սոցիալական փոխազդեցության համատեքստում և ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ դրա արդյունքում է ձևավորվում սեռին համարժեք կամ ոչ համարժեք վարքագիծ:

Սեռային նույնականությունը մարդու հետաքրքրությունների, պատկերացումների, դերերի և վարքի համապատասխանությունն է առնականության և կանացիության հասարակական չափանիշներին :

Համաձայն Սերվեռեվայի և Կոլեսովայի սեռական նույնականացումը ինքնագիտակցության միասնությունն է և անհատի վարքն է, որով անհատը իրեն դասում է որոշակի սեռին և տվյալ սեռի նկատմամբ սպասումներին համապատասխան է կողմնորոշվում [2, էջ 20]:

Նույնականացման մեխանիզմը սովորաբար բացատրվում է ընտանիքում երկու սեռի ծնողական կերպարների հետ ունեցած հարաբերության ձևից և գերակայող դիրքերից:

Հոգեվերլուծությունը նույնականացումը դիտարկում է որպես վաղ շրջանում ձևավորված հուզական կապ այլ մարդու հետ: Փոքրիկ տղան հատուկ հետաքրքրություն ունի իր հոր նկատմամբ, ուզում է դառնալ նրա նման, քանի որ հայրը դառնում է նրա իդեալը: Այս նույնականացման հետ մեկտեղ տղան սկսում է մորը որպես հենարան ընկալել: Առաջանում է 2 հոգեբանական տարբեր կապեր՝ մորը վերաբերվում է որպես սեքսուալ օբյեկտ, հորը կերպար, որին նմանակում է: Հոգեբանական կապերի արդյունքում առաջանում է էդիպյան բարդույթը: Տղան նկատում է, որ մորը հասնելու ճանապարհին հայրը խանգարում է և նմանակելու գործընթացը թշնամական բնույթ է ստանում, որը դրսևորվում է հորը փոխարինելու ձգտումով [9, էջ 488]:

Ն. Թոդորոն նույնականացման մեխանիզմը փորձում է մեկնաբանել ընտանիքում մոր գերակայող դիրքերից: Համաձայն նրա նույնականացումը տղայի և աղջկա համար տարբեր ձևով է տեղի ունենում, քանի որ առաջին խնամքը կատարում է կինը [10, էջ 206]:

Երկու սեռերի երեխաներն էլ սկզբում նույնականացվում են մորը, քանի որ մոր դերը տղամարդու համեմատ ավելի տեսանելի է: Այստեղ տղամարդու զարգացումը ավելի բարդ է քան կնոջ դերը: Տղան պետք է կատարի նույնականացման փոփոխություն: Տղան որպեսզի իրեն զգա տղամարդ պետք է իրեն տարանջատի մորից, որը աղջկա համար կարևոր չէ: Ավելի շատ ինչով հաստատվում է տղամարդկայնությունը, հակառակն է կանացիության: Այսինքն տղան այս ճանապարհը անցնում է կանացիության մերժումով:

Աղջկա համար տեղի է ունենում անձնային նույնականացում մորը, որովհետև մոր հետ կա անձնային հարաբերություն, որը վաղ առաջնային կապում է առաջացել, այսինքն նա գիտի ինչ է նշանակում լինել կանացի [10, էջ 207 - 209]:

Դ. Համաչեկը անդրադառնով սեռային տիպականացմանը, համադրում է այն սեռային նույնականացման հետ: Նա գտնում է, որ եթե նույնականացումը տեղի է ունենում անգիտակցական մակարդակում և երեխայի վարքը պայմանավորված է իր համար կարևոր անձի վարքով, սեռային տիպականացման ընթացքում գիտակցական մակարդակում տեղի է ունենում վարքի մոդելավորում և կրկնօրինակում:

Ելնելով այս տեսակետից նա գտնում է, որ դեռահասության փուլը կարևորագույն, և վճռորոշ է վերջնական նույնության ձևավորման համար, երբ դեռահասը տարբեր փորձարկումներով հասկանում է իր սեռադերային կերպարը:

Այս մտեցումներում առաջ են քաշվում երեխայի համար կարևոր անձի հատկապես ծնողների հանդեպ ունեցած

հարաբերությունները, հուզական կապը, ընդօրինակումը ինչպես նաև գիտակցական վերաբերմունքը իր վարքի մոդելավորման և կրկնօրինակման նկատմամբ: Սեռադերային նույնականացումը սկսվում է վաղ տարիքից և այն սոցիալական գործընթաց է, այսինքն կարևոր է նույնականացման օբյեկտի առկայությունը, նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքը և հուզականությունը:

Նույնականացման գործընթացները տարիքային տարբեր փուլերում ունենում եմ տարբեր դրսևորումներ: Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում այն արտահայտվում է ավելի շատ երեխայի խաղերում, երբ աղջիկ երեխան մայրիկի դերն է իրականացնում, խնամում է փոքրիկին, կանացի պարագաների նկատմամբ հատուկ հետաքրքրություն է ցուցաբերում իսկ տղա երեխան խաղում է ավտոմեքենաներով, զենքերով, զինվորի կամ հայրիկի դերերն է խաղարկում:

Սակայն դեռահասության փուլում սեռահասունացումով պայմանավորված սեռադերային նույնականացման գործընթացները և սեռադերային դրսևորման առանձնահատկությունները դառնում են որոշիչ ինքնագիտակցության վերակառուցման մեջ և իրական հարաբերություններում կարգավորիչ ֆունկցիա են իրականացնում:

Ի.Ս.Կոնը նշում է, որ դեռահասություան փուլում հորմոնալ աճը փոփոխություն է առաջացնում մարմնի կառուցվածքում, առաջացնում է նաև սեքսուալ ապրումներ, իսկ ֆիզիկական և հոգեսեքսուալ անհամաչափ զարգացումը խթանում է դեռահասին նորովի գնահատել ու իմաստավորել սեռական և սեքսուալ նույնությունը՝ սոմատիկ, հոգեբանական, վարքային բոլոր դրսևորումներով: Պուբերտանտությունը որակապես փոխում է սեռական ինքնագիտակցությունը [6, էջ 200]:

Համաձայն Դ.Վ. Կոլեսովի և Ն. Բ. Սելվերովայի մարդու սեռի խնդիրները հանդիսանում են սեռահասունացման խնդիրները, որը սկվում է դեռահասության փուլում: Եվ դրա համար նրանք կարևորում են սեռական հասունացման մասին ճիշտ պատկերացումները, որոնք սեռի խնդիրների տեսանկյուններն են բացահայտում [5, էջ 33 – 34]:

Ելնելով այդ տեսակետից նրանք սեռական հասունացումը դիտարկում են, որպես գործընթաց, որի արդյունքում օրգանիզմը հասնում է կանացի և տղամարդկային սեռին պատկանելու բարձրագույն աստիճանին [5, էջ 35– 36]:

Դեռահասության փուլում սեռահասունացման կարևորագույն գործընթացը, որպես սեռադերային պատկանելիության ձևավորման և դրսևորման հիմնարար նախապայման դեռահասները փորձում են իրական հարաբերություններում դրսևորել իրենց սեռական նույնությունը, վարքային և դերային առանձնահատկությունները:

Համաձայն Ու.Մաստերսի, Վ.Ջոնսոնսի, Ռ.Կոլոդնիի դեռահասների սեռական վարքի զարգացումը պայմանավորված չէ բնազդային սեռական հակումներով, այլ դեռահասների այն պատկերացումներով, թե ինչպես պետք է պահեն իրենց շրջապատում դրականորեն ընկալվելու համար: Դեռահասները իրենց պատկանելիությունը արական կամ իգական սեռին ապացուցում են, դրսևորում են հետերոսեքսուալ վարքի հաստատված չափանիշներով: Այս տարիքում սեռական դերի կատարումը ավելի վառ է արտահայտվում քան ավելի վաղ տարիքի երեխաների մոտ: Եթե վաղ տարիքում այն ընկալվում է որպես ապագա վարքի խաղ կամ փորձարկում, այս փուլում այն իրական է դառնում: Սեռական դերի կատարման կանոնները բարդանում են, իսկ հասարակական պատիժը խստանում: Տղա դեռահասները ձգտում են հաջողություն ունենալ սպորտում, ցուցաբերում են հետաքրքրություն աղջիկների նկատմամբ և սեքսուալ հարցերում: Եթե տղան այս փուլում փորձում

է շեղվել նշված օրենքներից, իր հասցեին ծաղրանքի խոսքեր է ուղղվում և կարող են ընկալվել պոտենցիալ համասեռամոլներ: Աղջիկները այլ խնդրի հետ են բախվում և առաջնահերթ է դառնում գրավչության ու մայրության չափանիշը [7]:

Ինչպես նշում է Ս. Խուդոյանը ինքնագիտակցության արթնացում է տեղի ունենում: 3 տարեկանում արթնացած ինքնագիտակցությունը, նորից է արթնանում դեռահասության փուլում: Համաձայն Ս. Խուդոյանի տեսակային դիֆուզ ինքնագիտակցության մեջ սկսում է տարբերակվել սեռային կողմը: Դեռահասը սկսում է ընկալել իրեն որպես կին կամ տղամարդ: Մինչ այդ տարիքը ևս առկա են սեռային ինքնագիտակցության առանձին կողմեր, սակայն դրանք արտաքին ձևական հատկությունների վրա են հանդես գալիս: Մինչ այդ երեխային սովորեցնում են սեռադերային վարքի նորմերը, սակայն սեռադերային ինքնագիտակցության աֆեկտիվ կողմը բացակայում է: Նա գտնում է, որ ինքնագիտակցության աֆեկտիվ բաղադրության մեջ ընդգրկված է բացի մարդու վերաբերմունքից նաև ես-ի զգացողությունը, զգացական ընդհանրացումը: Այսինքն դեռահասը ունի արդեն տղամարդու կան կնոջ կերպարի զգացողություն: Բացի դրանից նա ինքնագիտակցության ձևավորումը բնութագրում է, որ այն ինտերհոգեկան փուլից թևակոխում է ինտրահոգեկան փուլ: Այսինքն եթե մինչև դեռահասության տարիքը սեռադերային վարքը ձևավորվում էր ինքնաբուխ ձևով, երեխան նպատակաուղղված գործունեություն չէր կատարում իր սեռի մեջ կայանալու կամ էլ սեռադերային վարքի նորմերը յուրացնելու նպատակով, ապա դեռահասության փուլում դեռահասի համար այս խնդիրները դառնում են հրատապ: Վ. Ե.Կագանը նույնպես կարևոր է համարում հոգեսեքսուալ սոցիալիզացիայի՝ ընտանիքի և հասակակիցների դերը և փորձում է բացատրել սեռադերային սոցիալիզացիայի բացասական հետևանքները: Հատկապես կարևորում է դաստիարակությունը, որը պետք է լինի շատ ճկուն: Նա գտնում է, որ տղաները մասայական ճնշման են ենթարկվում: Տղաների դաստիարակությունը կանացի մի ձեռքից մյուս ձեռքն է անցնում: Այսինքն մասկուլինության նկատմամբ պահանջը բախվում է սոցիալական խոչընդոտին, որը առաջացնում է կամ սեռադերային լարվածություն կամ կորցնում է սեռադերային կողմնորոշումը: Դրա հետ մեկտեղ քչանում են նաև աղջիկների նկատմամբ ֆեմինինության պահանջները և աղջիկների սեռադերային կողմնորոշումը ավելի մասկուլինացված է դառնում [4]:

Հասարակական պահանջների ոչ բավարար պայմանները, մոտեցումները, հարաբերությունների խաթարումները կարող են նպաստել սեռադերային վարքի և կարծրատիպերի փոխակերպումներին և խաթարումներին, որը նույնպես տարիքային տարբեր փուլերում ունենում է իր զարգացման և դրևորման առանձնահատկությունները: Հետևաբար նույնականացման օբյեկտ հանդիսացող ծնողական կերպարի նկատմամբ բացասական վերաբերմունքը, հուզական կապի խաթարվածությունը կամ ընդհանրապես օբյեկտի բացակայությունը հանգեցնում են նույնականացման գործընթացի դեստրուկցիաների, որոնք տարակերպ դրսևորումներ են ունենում: Ուստի արտաքին հոգեբանական գործոնները ունեն առաջնային և կարևորագույն նշանակություն նույնականացման գործընթացը մեկնաբանելու և կանխորոշելու համար: Կարող ենք ասել, եթե անբավարար են սեռային սոցիալիզացիայի պայմանները, հիայտ են գալիս արդեն իսկ սեռադերային դեստրուկտիվ վարք, փոխակերպված դերեր և կարծրատիպեր, որի արդյունքում արական սեռի ներկայացուցիչներին բնորոշ են դառնում իգական սեռին համարժեք

վարքային ձևեր, դերեր, պատկերացումներ և հակառակը՝ իգական սեռի ներկայացուցիչներին բնորոշ է դառնում արական սեռին համարժեք վարքային ձևեր, դերեր, պատկերացումներ, որը դեռահասության փուլում ունենում է իր յուրատիպ դրսևորումները:

Սեռային նույնականության խանգարումը կամ դեստրուկցիան հակառակ սեռի հետ ուժեղ և կայուն նույնականացման ձգտումն է, որն ուղեկցվում է սեփական սեռի նկատմամբ անհարմարվողականության զգացողությամբ: [11 էջ 493]:

Սեռադերային նույնականացման հասարակական պահանջների և ձևավորման ներքին մեխանիզմների ինչպես նաև դրանց հնարավոր խանգարումների գործընթացի մասին ուսումնասիրությունները համարվում են նաև բժշկական ոլորտի խնդիրներ: Անդրադառնալով արդեն իսկ խանգարման դրսևորումներին, մեզ առավել հետաքրքրում է DSM VI TR-ում ներառված սեռային նույնականացման խանգարման ախտորոշիչ խմբերը, որում առանձնացված է **Ա** չափանիշը, ինչը ուժեղ և կայուն նույնականացումն է հակառակ սեռի հետ, և ոչ թե հակառակ սեռին բնորոշ մշակույթային առավելություններ ունենալու ցանկություն:

Երեխաների շրջանում խանգարումն արտահայտվում է թվարկված դրսևորումներից նվազագույնը չորսով.

- Պարբերական ցանկության արտահայտում հակառակ սեռ դառնալու, կամ պնդում լինելու հակառակ սեռի ներկայացուցիչ:
- Տղաների շրջանում հակառակ սեռի հագուստների նախընտրություն կամ կանացի հագուստի նմանակում, աղջիկների շրջանում՝ միայն կարծրատիպային հագուստ կրելու պնդում:
- Դերային խաղերում հակառակ սեռի դերերի մշտական նախընտրություն կամ հակառակ սեռի լինելու մշտական ֆանտազիաներ:
- Հակառակ սեռին բնորոշ խաղերին և զբաղմունքներին մասնակցության բուռն ցանկություն:
- Հակառակ սեռի խաղընկերների արտահայտված նախընտրություն:

Դեռահասների և մեծահասակների շրջանում **Ա** չափանիշով խանգարումն արտահայտվում է հետևյալ ախտանիշներով

.Հակառակ սեռի լինելու ցանկություն, հաճախակի ներկայացում, իբրև հակառակ սեռի ներկայացուցիչ, հակառակ սեռի նման ապրելու ցանկություն կամ նման վերաբերմունք ստանալու ցանկություն, հակառակ սեռին բնորոշ զգացմունքներ և հակազդումներ ունենալու խոստովանություն:

Բ չափանիշով խանգարումը դրսևորվում է սեփական սեռի նկատմամբ մշտական անհարմարության կամ սեռային դերի հետ անհամապատասխանության զգացումով:

Երեխաների շրջանում խանգարումը արտահայտվում է ներքոհիշյալ թվարկումներից որևէ մեկով.

Պնդումներ տղաների շրջանում, որ իր սեռանդամը և ամորձիները զզվելի են կամ պետք է անհետանան, կամ պնդումներ, որ ավելի լավ կլիներ սեռանդամ չունենալ, խուսափում կոպիտ մրցակցային խաղերից և մերժում արական խաղալիքներին, խաղերին, զբաղմունքներին:

Աղջիկների շրջանում հրաժարվում են նստած դիրքով միզել, ցանկություն, որ ունենան սեռանդամ, դաշտան և զարգացած կրծքագեղձեր չունենալու ցանկություն, խուսափում նորմատիվ իգական հագուստից:

Բ չափանիշով խանգարումը դեռահասների և մեծահասակների շրջանում արտահայտվում է առաջնային և երկրորդային սեռական հատկանիշների հետ պայքարելու ձգտումով կամ համոզմունք, որ ինքը սխալ սեռով է ծնվել:

Գ չափանիշով խանգարումը չի համընկնում ֆիզիկական ինտերսեռական

վիճակի հետ:

Դ չափանիշով խանգարումը առաջացնում է կլինիկորեն նշանակալի դիսթրես կամ սոցիալական, աշխատանքային կամ գործունեության այլ ոլորտի խաթարում [11]:

Այս դասակրգումը բժշկական մոտեցումն է ներառում և կլինիկորեն հստակեցված չափորոշիչներ են, որոնք մեր ուսումնասիրության համար ընդամենը օժանդակող դեր են կատարում:

Հոգեբանական վերլուծությունները այս խնդրի առնչությամբ մեզ առավել են հետաքրքրում և Կախված սեռային նույնականացման խանգարման արտահայտվածությունից Վ.Ե. Կագանը տարանջատում է

1. Հարմարվողական ռեակցիայով ուղեկցվող մասկուլինության և ֆեմինինության համահարաբերակցության անհատական ձևը:

2. Սեռադերային կոնֆլիկտ, որը դրսևորվում է անձնային մակարդակում նևրոտիկ տիպի հակազդման ձևով, որպես իրական կամ թվացող անհամապատասխանություն սեռադերային չափանիշներին:

3. Սեռային նույնության կոնֆլիկտ, որպես ակտիվ, գիտակցված հակադրություն, երբ զգում է իրեն հակառակ սեռի ներկայացուցիչ: Անձնային հակազդման ձևը ընդ որում կրում է ուղղորդված ակտիվ հարմարվողական բնույթ և հակված են օրինականացնել հակառակ սեռի պատկանելիության ապրումը [1, էջ 150]:

Բերն Բելենկուրը բացահայտել է նաև, որ գենդերային կարծրատիպի խանգարումը առաջացնում է տարաբնույթ աուտոագրեսիայի ձևեր՝ սուիցիդալ փորձ, ադիտիվ վարք՝ նարկոտիազացիա, ալկոհոլիզմ [1, էջ 150]:

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև Գ. Մ. Վասիլչենկոյի հոգեսեռական զարգացման խանգարումների ուսումնասիրմանը, որտեղ նա քննարկում է սեռադերային վարքի փոխակերպում հասկացությունը, համաձայն որի թեև պահպանված է սեռային ինքնագիտակցությունը, սակայն ձևավորվում է սեռադերային վարք, որը հատուկ է հակառակ սեռին:

Սեռադերային վարքի փոխակերպման ժամանակ սեռային ինքնագիտակցության խանգարումը ախտոգեն գործոնի համար միայն ֆոն է դառնում: Հիմնականում այն հիմնավորում է ծնողների դաստիարակության աղավաղումով, երբ երեխային վերաբերվում են որպես հակառակ սեռի ներկայացուցիչ, ինչպես նաև ընտանիքում առկա սեռական դերերի խանգարումով (հեղինակություն և գերակայություն վայելող մայր, ենթարկվող հայր, անլիարժեք ընտանիքներ, որտեղ մայրը տղային մեծացնում է կանացի սկզբունքներով, իսկ աղջիկների դեպքում, երբ բացակայում է մայրական սերը, որի արդյունքում առաջանում է կնոջը ոչ հատուկ ագրեսիվություն, կոպտություն):

Այսինքն նա սեռադերային վարքի փոխակերպումը բացատրում է հոգեբանական խանգարումներով և փորձում է համեմատել տրանսսեքսուալության հետ: Հիմնական տարբերակիչ հատկանիշը առանձնացնում է այլ սեռին պատկանելիության զգացողությունը, որը բնորոշ է տրանսսեքսուալությանը:

Նա գտնում է, որ սեռադերային խանգարումը սկսվում է դերային խաղերում, երբ աղջիկը խաղում է ավտոմեքենքներով, կռվում է տղաների հետ, վերցնում է հոր, ամուսնու կամ եղբոր դեր: Տղաները ավելի փափուկ, կանացի դերեր են ընտրում, խուսափում են կոնֆլիկտներց:

Նա գտնում է, որ սեռադերային խանգարումների ժամանակ ձգտում են հակառակ սեռի հագուստների, սրանով արտահայտվում է ձգտումը հակառակ սեռին, չնայած ինքնանույնացումը պահպանված է և առկա չէ սեքսուալ գունավորում: Այս խանգարումների դեպքում իգական սեռի ներկայացուցիչները անտարբեր են իրենց սեռի նկատմամբ կամ

դրսևորում են նեգատիվ վերաբերմունք և չունեն ընդհանուր հետաքրքրություններ: Քանի որ խանգարված չէ սեռային ինքնագիտակցությունը իրենց կին են զգում և չեն ամաչում սեփական մարմնից: Սակայն շփվում են միայն հակառակ սեռի հետ և վարքում տղայական ոճ է գերակայում, կառուցում են միայն ընկերական փոխհարաբերություններ, որի արդյունքում հոգեսեքսուալ զարգացումը հապաղում է: Արական սեռի հետ միայն գործնական շփում են հաստատում և սեռերի փոխհարաբերությունը ընկալում են որպես մեղք: Շատ դեպքերում քանի որ խոչընդոտները բացակայում են հակառակն է լինում, սեռադերային փոխակերպումների դեպքում շուտ են մտնում սեռական կապի մեջ, որը սկսվում է դեռահասության փուլից [8]:

Սեռադերային դեստրուկցիաները ձևավորվում են սոցիալիզացիայի անբավարար պայմաններում, երբ խաթարվում է նույն սեռի կերպարի հետ հուզական կապվածությունը, ընդօրինակման գործընթացը, անբավարար են սեռային նույնացման գործընթացին նպաստող փոխհարաբերությունները, հաղորդակցման ձևերը: Սեռադերային նույնականացման դեստրուկցիաները վառ դրսևորվում եմ սեռահասունացման գործընթացով պայմաավորված դեռահասության փուլում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ильин Е. П.Пол и гендер. – СПБ.: Питер, 2010. – 688с
2. Исаев Д. Н., Каган В. Е. - Психогигена пола у детей - Л. : Медицина, 1986. – 336с
3. Исаев Д.Н., Каган В. Е. - Половое воспитание и психогигена пола у детей. – Л.: Медицина,1979. – 184с
4. Каган В.Е. Воспитателю о сексологии. Педагогика . М. , 1991
5. Колесов Д.В., Сельверова Н.Б. Физиолого – Педагогические аспекты полового созревания. М., §Педагогика¦, 1978. - 224 с.
6. Кон И.С. - Введение в сексологию. – М.: Медицина. 1989.- 336 с
7. Мастерс У. Джонсонс В. Колодни Р. Основы сексологии. Издотелство мир, 1998 с. 721
8. Сексопатология: справочник/ под ред. Г.С.Василченько/. 1990. – М., Медицина с.576
9. Фрейд З. Индентификация.В.кн.психология самосазнания./Под ред.Д.Я.Райгородского.Самара, БАХРАМ-М, 2000,с.488 – 493
10. Чодороу Н. Воспроизводство материнства: Психоанализ и социология гендера/ М-РОССПЭН, 2006 – 496с
11. American Psychiatric Assosiation. 2005. Diagnostic and Statistical Manual of mental Disorders. Washington, DC: Am. Psychiatr. Assoc. 4th ed., text. Rev
12. Money J., Ehrhardt A.A.Man and woman, boy and girl. – Baltimore,MD: John Hopkins University Press 1972

ОСНОВОПОЛАГАЮЩИЕ ВОПРОСЫ СЕКСУАЛЬНО-РОЛЕВОЙ ИДЕНТИФИКАЦИИ И ДЕСТРУКЦИИ ИДЕНТИФИКАЦИИ В ПОДРОСТКОВОМ ПЕРИОДЕ

КАМО ВАРДАНЯН

руководитель научно–исследовательского центра Армянского госу дарственного педагогического университета им. Хачатура Абовя на, доцент кафедры развития и прикладной психологии факультета социальной педагогики и психологии АГПУ им. Хачатура Абовяна, доктор психологических наук, доцент

ЛИЛИТ ХАЧАТРЯН

Псилайф психологически центр

В статье представлены и обсуждены процессы сексуально–ролевой идентификации и важность формирование социальной стороны сексуально–ролевой идентификации. Здесь так же обсуждены важность процессов подросткового полового созревания и особенности деструкции сексуально–ролевого проявления.

ISSUES OF SEXUAL ROLE IDENTIFICATION AND IDENTIFICATION DISTRUCTION IN THE TEENAGE PERIOD

KAMO VARDANYAN

Director of the Scientific Research Center at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Psychological Sciences, Associate Professor.

LILIT KHACHATRYAN

"PsyLife" Psychological Support Center

The article presents and discusses processes of sexual identification and social importance of accurate formation of sexual identification. The importance of processes of teenagers sexual maturing and peculiarities of sexual destructive behavior are discussed in the article.